



## **Երաժշտական գրադարանները Հայաստանում այցելության հաշվետվություն**

/2018 թ. - ի հոկտեմբերի 17-20-ը, Մասսիմո Ջենտիլի-Տեդեսկի,  
IAML-ի ներկայացուցիչ/

### **Հայաստանյան համագործակցություն**

Նիկոլայ Կոստանոյան - Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն  
Ռուզան Տոնոյան - Ազգային մանկական գրադարանի տնօրեն  
Տիգրան Չարգարյան - Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն

### **Ներածություն**

Ես հրավիրված էի Հայաստան իսկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի 85 ամյակի հանդիսությունը մասնակցելու համար: Հնարավորություն ունեցա հետևելու նաև Հայաստանի երաժշտագիտական գրադարանի իրավիճակին (այժմ՝ Հայկական երաժշտական գրադարան), այցելելու այլ գրադարաններ՝ Երևանում և Ալաշուրում:

Այս հաշվետվությունը պատրաստվել է քառօրյա գործունեության դիտարկման հիման վրա, և ես շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր իմ ներկայությունը Հայաստանում դարձրեցին այսքան հաճելի և տեղեկատվական: Տեղյակ եմ Հայաստանի գրադարանների զարգացմանը խոչընդոտող ֆինանսական և այլ խնդիրների մասին, սակայն, կարծում եմ, պետք է իմ հաշվետու եզրակացություններում ճշմարտացի լինեմ: Առաջարկությունները հիմնված են գրադարանային տարբեր ոլորտներում ունեցած երկարատև փորձի և նախորդ՝ 2006, 2011, 2012 և 2017 թվականների Հայաստան կատարած 4 այցելությունների վրա:

(2006 թ.-ի այցը հիմնականում ծանոթացում էր Հայաստանի երաժշտական գրադարաններին, 2011 թ.-ի այցը թիրախավորված էր Հայաստանի երաժշտագիտական գրադարանի ապագային, 2012 թ.՝ Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք տոնակատարության շրջանակում ներառում էր կապեր և հանդիպումներ երաժշտական գրադարանների աշխատակիցների հետ: 2017 թ. այցը մոտիվացվում էր նոր Կոմիտաս թանգարան-ինստիտուտի և այնտեղ երաժշտական գրադարանի տեղավորման հնարավոր լուծումների ուղղությամբ): Չնայած կարճ ժամանակ է անցել իմ վերջին այցից, և տեսակետներ են փոխվել, ես հանգիստ կարող եմ ասել, որ հնարավոր գալիք զարգացումները շատ ավելի հստակ են թվում:

Այս հաշվետվությունը թիրախավորված է Երաժշտական գրադարանի ներկա իրավիճակին և առնչվող թեմաներին: (Երաժշտական գրադարանի հավաքածուների, հավաքածուների նկարագրության և առաջարկությունների մասին ամփոփ տեղեկություններ կարող եք ստանալ ՀՀ մշակույթի նախարարի համար նախորդ այցերի՝ Յելեն Ռուֆի հետ համատեղ IAML-ի անունից պատրաստված հաշվետվություններից՝ կցված է):

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր գործընկերներիս, ովքեր աջակցեցին ինձ Հայաստանում գտնվելու ընթացքում, հատկապես Ռուզան

Տոնոյանին՝ հանդիսութեանը ներկա գտնվելու իր հաճելի հրավերի և այն հնարավորութեան համար, որ նա ինձ ընձեռեց մեկ անգամ ևս այցելելու Հայաստան, Ելույթ ունենալու, մասնակցելու հանդիպումներին և կլոր սեղաններին, հեքիաթապատումներին և բուն հանդիսութեանը՝ ինձ և բոլոր հյուրերին փոխանցելով անմոռանալի ժամանակ և մեծ փորձ: Շնորհակալ եմ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի ամբողջ անձնակազմին՝ նրանց ընկերական և ջերմ վերաբերմունքի, Լիլիթ Հարությունյանին՝ Երևանի գրադարաններ ուղեկցելու և Տիգրան Չարգարյանին՝ Երաժշտական գրադարանի դրութեան վերաբերյալ ինձ քննարկման ժամանակ հատկացնելու համար: Ես մասնակցեցի պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների՝ ներառյալ ՀՀ մշակույթի փոխնախարարներ Վահե Բուդոմյանի և Նազենի Ղարիբյանի հետ արդյունավետ ընթրիքը:

## **Հաշվետվութեան պլանը**

1. Գործունեություն
2. Գործունեութեան տեսություն-վերլուծություն սկսած 2017 թ.-ից
3. Այցելած գրադարանների ընդհանուր դրութեան մասին վերլուծություն
4. Կենտրոնացում Հայկական երաժշտական գրադարանի վրա
5. Եզրակացություններ

### **1. Գործունեություն**

#### **1.1 Այցեր**

- Ազգային մանկական գրադարան
- Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
- Հայաստանի ազգային գրադարան
- Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գրադարան
- Աչաջուր համայնքի մշակույթի տուն

#### **1.2 Հանդիպումներ և կոնֆերանսներ**

- Ելույթ: «Հմտություններ, որոնք անհրաժեշտ են ժամանակակից գրադարանավարին» (հոկտեմբերի 17)
- Կլոր սեղան: «IBBY, IFLA, IAML համագործակցութեան հեռանկարները» (հոկտեմբերի 18)
- Հայաստանի գրողների միություն՝ հանդիպում հայ գրողների հետ (հոկտեմբերի 19)

## **2 Գործունեութեան տեսություն-վերլուծություն սկսած 2017 թ.-ից**

2017 թ.-ի այցի արդյունքներից Էր Իտալիայում երաժշտական գրադարանավարի վերապատրաստման պլանավորումը. արդյունքում Լիլիթ Հարությունյանը՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի Երաժշտական գրադարանի մատենագիտութեան, ձայնագրութեան ու թվայնացման բաժնի վարիչը, մեկ ամիս՝ 2018 թ. մայիսի 28-ից հունիսի 28-ը, վերապատրաստվեց Իտալիայում՝ հիմնականում աշխատելով Իտալական ազգային միութեան գրացուցակի վրա (SBN) երաժշտութեան թվայնացման և հեղինակային տվյալների հետ, Միլանի երաժշտական ֆոնդերի ուսումնասիրութեան գրասենյակում և Հռոմի միացյալ գրացուցակի և մատենագիտական տվյալների կենտրոնական ինստիտուտում: Լիլիթ Հարությունյանի Իտալիայի գործունեութեան հաշվետվութեանը կցված է:

հնչալես և պլանավորված էր, Երաժշտական գրադարանը նոր տարածք տեղափոխելու գործընթացը շարունակվում է:

### **3 Այցելած գրադարանների ընդհանուր իրավիճակի մասին վերլուծություն**

#### **3.1 Ազգային մանկական գրադարան**

Այցը այս գրադարան միշտ հուզառատ է. այն աշխարհում ոչ միայն եզակի է իր ոճով, և հետաքրքիր շինություն ու գործունեության մեծ տարածք է առաջարկում, այլև իրական մշակույթի կենտրոն է և, միայն հեքիաթապատումներին ներկա երեխաների և պատանիների հիացած դեմքերը տեսնելու համար, արժե այցելել գրադարան: Մեծ կարևորություն է տրվում օտար լեզուներին, աշխարհի տարբեր երկրների՝ հատկապես Ֆրանսիայի, Գերմանիայի և Արաբական երկրների մշակույթին: Ես տեղյակ եմ, որ գրադարանում նոտաների հավաքածուներից, ցանկացած լեզվով գրքերից և ձայնագրություններից օգտվելու բավական հնարավորություններ կան:

Գրադարանը հետաքրքրված է նմուշներ ստանալ Երաժշտական գրադարանի բազմօրինակ տարբերակներից, և ես միայն կարող եմ աջակցել այս խնդրանքին:

#### **3.2 Ազգային երաժշտական գրադարան\***

Այս գրադարանը, որը տեղակայված էր բնակելի շենքի առաջին հարկի առանձին երկու տարածքներում, մինչ վերջերս չափազանց վատ պայմաններում էր գտնվում, և 2006 թ.-ից նրա տեղափոխումը նոր ու ապահով վայր չափազանց անհրաժեշտ էր: Գործընթացն սկսվել է 2017 թ.-ին, և մինչ ավարտը կա ևս մեկ տարի:

Հավաքածուի նախնական դիտարկումից որոշ հարցեր առաջացան.

- կան մի շարք բազմօրինակ տարբերակներ
- կան գրքեր, որոնք չեն վերաբերում երաժշտությանը (օր.՝ արվեստ, քաղաքականություն և այլն):

Գրադարանի տարածքում գրքերը և նոտաները դասակարգվում, ստվարաթղթե արկղերի մեջ են տեղադրվում և տեղափոխվում Կոմիտասի թանգարան-ինստիտուտ: Այստեղ գույքացուցակները ստուգվում են, այնուհետև կրկնակի և ոչ երաժշտական նյութերը առանձնացվում են և տեղափոխվում՝ Հայաստանի ազգային գրադարանի ներքնահարկում նրանց հատկացված պահպանման տարածքներ: Երաժշտությանը վերաբերող նույն նոտայից, ձայնագրությունից կամ գրքից միայն մեկ կամ մի քանի օրինակ պետք է պահվի Կոմիտասի թանգարան-ինստիտուտում: Յուրաքանչյուր միավորի նոր վայրը գրվում է գույքացուցակներում (այսպիսով՝ աշխատանքի ավարտին բացակայող միավորը կնկատվի):

Մինչ այսօր կատարված վերլուծությունից կարելի է որոշ եզրակացություններ անել.

- բազմօրինակ նմուշները տասնյակներով են՝ ավելի քան 50-60 օրինակ
- Ազգային գրադարանը, ամենայն հավանականությամբ, արդեն տնօրինել է ոչ երաժշտական գրքերի առնվազն մեկական օրինակ
- Հայաստանի շատ գրադարաններ հետաքրքրված են ստանալ այն նյութերը, որոնք, ինչ-ինչ պատճառներով, չեն հետաքրքրում ո՛չ Կոմիտասի թանգարան-ինստիտուտին, ո՛չ ՀԱԳ-ին:

Ամփոփենք՝ Երաժշտական գրադարանի միավորների քանակը՝ մոտավորապես 190.000, Էակնորեն կրճատվել է, ուստի կրճատվել են նաև դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները:

### **3.3 Կոմիտասի թանգարան-ինստիտուտ**

Իմ I այցի ընթացքում ես նկատեցի, որ «... Երաժշտագիտական գրադարանի մեծաքանակ նյութերը պահելու համար հատկացված տարածքն անբավարար էր. կար պահեստի վերածված փոքր սենյակ, որի անկանոն ձևը՝ բազմանկյունները և թեք տանիքը անհարմար էին դարձնում հավաքածուների արդյունավետ պահպանումը և շարժական դարակների տեղաշարժը»:

Գրքերի և նոտաների հաջող տեղափոխման խնդիրը տարածքի անհրաժեշտությունը դարձնում էր ավելի ու ավելի հրատապ. արկղերի և հատորների կապոցները կուտակվում էին, և չկային դարակներ, որպեսզի դրանք դասավորվեին ինչպես հարկն էր: Այսպիսով՝ ես փորձել եմ ստուգել մեկ անգամ ևս, կա՞, արդյոք, կոմպակտ շարժական դարակները տեղավորելու տարածք:

Չնայած անհամաչափ տարածքին, որոշ խիտ դարակներ կարող էին տեղավորվել այդ նպատակի համար նախատեսված սենյակներում. 3 շարժական երկկողմանի գրադարակ՝ մոտ 3 մետր լայնությամբ և 2 մետր բարձրությամբ և գրքերի համար նախատեսված 13 ավելի փոքր չափի դարակ: Այլ շարժական դարակներ կարող էին տեղադրվել կից սենյակում, որը կնշանակեր վերացնել աշխատանքային տարածքը:

Ներքնահարկում կան 2 հանդերձարաններ՝ I-ը կարելի է վերաօգտագործել, II-ը բաժանել երկու մասի, որը բավարար տարածք կլինի մոտավորապես 30 մարդու համար: Այս դեպքում, մոտավորապես 12 x 4,50 մ և 2,50 մ բարձրությամբ տարածքը կարելի կլինի օգտագործել՝ տեղավորելով թերևս 23 շարժական երկկողմանի դարակ, որոնք հավանաբար բավարար կլինեն գրադարանի երաժշտությանն առնչվող ամբողջ հատվածը տեղավորելու համար, այն հատվածը, որը հենց հետաքրքրում է Կոմիտասի թանգարան-ինստիտուտին:

Փոքր դարակներ հնարավոր է տեղադրել ներքնահարկի միջանցքում:

Սա չի լուծում ընթերցասրահ տրամադրելու խնդիրը, սակայն հարթում է ավելի կարևոր և անհրաժեշտ հինախնդիր. այն է՝ ապահով պահել Երաժշտական գրադարանը և այն պահպանել ապագայի համար:

Ես պետք է ավելացնեմ, որ մի քիչ խոնավություն նկատվեց այն սենյակում, որտեղ գրքերը պահվում էին. խնդիրն անհրաժեշտ է լուծել:

### **3.4 Հայաստանի ազգային գրադարան**

Հայաստանի ազգային գրադարանը բավական տարածք է տրամադրել ներքնահարկում: Ներկա պահին նրանք պահում են գրքեր, որոնք երաժշտության հետ առնչություն չունեն և ձայնագրությունների բազմաթիվ նմուշներ:

Դժբախտաբար, գրադարակներն անբավարար են, այդ պատճառով նյութերի մեծ մասը ստվարաթղթե արկղերի մեջ անկարգ իրար վրա է կուտակված և դրված մեծ սենյակի հատակին, որտեղ խոնավության հետքեր երևացին: Գրադարակների վրա գրքերը և նոտաները լավ տեղավորված են, իսկ բովանդակության ցուցակը փակցված է յուրաքանչյուր գրադարակի վրա:

Բացասական կողմն այն էր, որ ամբողջ տարածքում, որտեղ պահվում են գրքերը և ձայնագրությունները, փոշին անհնարին է դարձնում տարածքի օգտագործումը որպես աշխատանքային վայր. միայն մի քանի թույլ այնտեղ մնալով՝ զգացի, որ կոկորդա գրգռվեց, և ստիպված դուրս եկա: Երկու աշխատակից է աշխատում այնտեղ, ովքեր այնտեղ մնալու համար ստիպված են ձեռնոցներ և պաշտպանիչ դիմակ կրել: Ես հաստատապես խորհուրդ եմ տալիս գտնել ավելի լավ և ապահով աշխատանքային տարածք:

Կա ենթադրություն, ինչպես նշվել էր, որ Ազգային գրադարանն արդեն տնօրինել է երաժշտությանը չառնչվող բոլոր գրքերը՝ հիմնականում արվեստի կամ խորհրդային Միության առաջնորդների կյանքի վերաբերյալ. դրանք Հայաստանի այլ գրադարաններին բաժանելու ծրագիրը պետք է քննարկվի:

### **3.5 Կոմիտասի անվան կոնսերվատորիայի գրադարան**

Ես ոչ պաշտոնապես էի այցելել գրադարան, այդ պատճառով կարող եմ կիսվել միայն իմ տպավորությամբ: Շատ քիչ բան էր փոխվել վերջին՝ 2006 թ.-ին կատարած այցից: Գրադարանը լավ վիճակում է, անձնակազմը՝ օգնող, իսկ ընթերցասրահը՝ լի օգտվողներով:

Գրացուցակները, կարծես, միայն քարտային ձևով են: Ես տեղեկացա, որ համակարգչային գրացուցակավորումն սկսվել է՝ օգտագործելով ներքին մշակված տարբերակ Microsoft Access-ի հիմքում ընկած հավելվածը, և, փաստորեն, գրադարանի կայքէջում առցանց հասանելի գրացուցակը ստեղծման ընթացքի մեջ է՝ <http://www.conservatory.am/en/2013-07-07-13-19-54/2013-07-07-13-21-23/2013-10-18-11-47-08>.

Շատ ավստս, որ ոչ մի նախաձեռնություն չի եղել համագործակցելու գրադարանային ցանցին, որը գրադարանային աղբյուրները կդարձնե ավելի հասանելի և տեսանելի բոլոր օգտվողների համար:

### **3.6 Աչաջուր համայնքի մշակույթի տուն**

Հայաստանյան այցը ներառեց ճանապարհորդություն դեպի Տավուշի մարզի Աչաջուր համայնք և այցելություն այնտեղի մշակույթի տուն: Բացի ջերմ ընդունելությունից՝ ավանդական պարեր դիտելուց և գործիքային երաժշտություն՝ քանոն և դուդուկ ունկնդրելուց, ես հնարավորություն ունեցա տեսնելու փոքրիկ գրադարանը, որը սակավաթիվ նոտաների գրքեր և ձայնագրություններ ուներ: Ներկա գտնվեցի դուդուկի և քանոնի ուսուցման պարապմունքներին և եղա սենյակում, որտեղ դաշնամուր կար:

Նկատի ունենալով օգտվողներին՝ ես հարցրեցի գրադարանավարին՝ արդյո՞ք կհետաքրքրի ցանկացած նոտաների և ձայնագրությունների նվիրատվություն, և պատասխանը, բացառապես, դրական էր: Կարծում եմ, որ երաժշտական գրադարանի նոտաների և ձայնագրությունների բազմօրինակների բաժանումը երկրի գրադարաններին կլինի լավագույն լուծումը, և կարող է լավ ազդեցություն ունենալ այսպիսի հաստատությունների զարգացման համար:

## **4 Կենտրոնացում Հայկական երաժշտական գրադարանի վրա**

Ի լրումն 2017 թ.-ի իմ հաշվետվության 4-րդ կետում արտահայտած կարծիքի՝ Ազգային երաժշտական գրադարանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

տեղափոխման առավելությունների և զարգացման ներուժի վերաբերյալ, ես պետք է ընդգծեմ, որ գրադարանի կյութերը գրացուցակավորելու համար օգտագործվող հավելվածը Կոհան է, որն ընդհանուր նպատակների համար շատ գոհացուցիչ է, բայց շատ քիչ բնորոշ մանրամասներ է ներկայացնում մուտքի համար և շատ քիչ՝ երաժշտական նկարագրություն: (Այս եզրակացությանը հանգել եմ Լիլիթ Չարությունյանի Իտալիայում վերապատրաստման ժամանակահատվածում):

Ավելին՝ այլ երաժշտական գրադարաններ օգտագործում են ուրիշ հավելված կամ ոչ մի հավելված չեն օգտագործում նմանատիպ աղբյուրները գրացուցակավորելու համար. այդ պատճառով միավորների մեծ մասը գրացուցակավորվում է բազմաթիվ անգամ՝ վատնելով ժամանակ և Էներգիա:

Կարծում եմ՝ Կոհայի ավելի լայն օգտագործումը հայաստանյան բոլոր գրադարանների կողմից պետք է լինի հանձնարարելի, ինչպես նաև մշակվեն հատուկ դաշտեր, որոնք անհրաժեշտ է հատուկ տեսակների ռեսուրսների համար, ինչպիսին երաժշտությունն է:

## **5 Եզրակացություններ**

Շատ քիչ ժամանակ է անցել իմ վերջին այցից, այդ պատճառով ես կարող եմ միայն կրկնել նախորդ հաշվետվությանս նկատառումները, որը վերաբերում էր Կոմիտասի թանգարան-ինստիտուտում Հայկական երաժշտական գրադարանի տեղավորմանը և բոլոր նոտաներն ու ձայնագրությունները պահելու հնարավորությանը:

Թվում է՝ անհրաժեշտ տարածությունն ավելի քիչ է, քան նախապես կանխատեսվել էր, իրականում կա տարածքի հրատապ անհրաժեշտություն կոմպակտ գրադարակների և գրապահոցի համար: Ավելի լայն տարածքներ ընթերցասարահի, գրասենյակների և գրապահոցների համար կարելի է նախագծել ապագայում:

ՀԱԳ-ի ներքնահարկի համար պետք է տրամադրվեն գրադարակներ, որպեսզի պահպանվեն նոտաների և ձայնագրությունների բազմաթիվ նմուշները, մինչև նրանց բաշխումը այն գրադարաններին, որոնք դրանք ստանալու ցանկություն կունենան: Աշխատակիցների համար ևս պետք է տրամադրվեն լավ և հարմարավետ տարածքներ:

### **Օգտակար հղումներ՝**

<http://www.iaml.info>

<https://www.ifla.org/files/assets/faife/publications/ifla-world-report/armenia.pdf>

### **Կցումներ՝**

2006 visit report, Armenia\_music\_library\_report\_IAML.pdf (November 2006)

2017 visit report, Armenia\_music\_library\_report\_IAML\_2017.pdf (June 2018)

2018 report on L. Harutyunyan's visit to Italy, Armenia\_Visit\_Harutyunyan\_Italy\_2018.pdf (June 2018)

Մասսիմո Ջենտիլի-Տեդեսկի

IAML, 2018 նոյեմբեր

*\* Հաշվետվության թարգմանության մեջ մասնակիորեն պահպանվել է հեղինակի  
National Music Library գրառումը (իրականում խոսքը վերաբերում է նախկին  
Երաժշտագիտական գրադարանին):*